

## ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

---

- ✓ 2012թ. մարտի 1-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Եղիազարյանը և նույն բաժնի առաջատար մասնագետ Ռ. Շաբոյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Թվինինգ ծրագրային առաջարկների ներկայացման գործընթացի 2012թ. առաջին փուլ և Թվինինգ և Թայեքս ընթացիկ ծրագրեր» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2012թ. մարտի 21-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ոլորտում պարտավորությունների հոշակագրի կատարման վերաբերյալ 2012թ. զեկույցի վերջնականացման ամփոփիչ համաձայնությունը» խորագրով խորհրդակցությանը,
- ✓ 2012 թ. մարտի 23-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Թափոնների կառավարում - Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք - Արևելք» խորագրով տարածաշրջանային ծրագրի ներկայացմանը,
- ✓ 2012թ. մարտի 26-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Հակոբյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «INOGATE» ծրագիր թեմայով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2012թ. մարտի 27-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի պարենային ապահովության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Հ. Զաքարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «ՀՀ գյուղատնտեսության զարգացման խնդիրները պարենային անվտանգության համատեքստում» խորագրով խորհրդաժողովին,
- ✓ 2012 թ. ապրիլի 2-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստանում էկոլոգիական տվյալների մշակման ազգային տարաբաշխված միջավայրի ստեղծում և կիրառում» խորագրով սեմինարին,

- ✓ 2012 թ. ապրիլի 4-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Զ. Ավոյանը, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Զբաղվածություն և միգրացիա» խորագրով սեմինարին,
- ✓ 2012թ. ապրիլի 6-ին ՀՀ ՎՊԽ անդամներ Յու. Պողոսյանը և Գ. Անանյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ Ա. Անանյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Հ. Հակոբյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Տեխնիկական աջակցություն Հայաստանի ազգային էներգետիկայի համակարգերի և ջերմոցային գազի ինվենտարի մշակման համար» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2012թ. ապրիլի 6-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիայից բխող ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ գործողությունների համակարգման միջգերատեսչական հանձնաժողովի 2-րդ նիստին,
- ✓ 2012 թ. ապրիլի 10-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Առողջություն և երկարակեցություն» խորագրով մամուլի ասուլիսին,
- ✓ 2012 թ. ապրիլի 10-17-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Գ. Աշուղյանը, վիճակագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի բաժնի առաջատար մասնագետ Ա. Սարգսյանը, միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Նալբանդյանը մասնակցել են «Հաղորդակցման կառավարում. Ինչպես ձեռք բերել գործիմացություն հաղորդակցման մշակույթում» խորագրով դասընթացին,

- ✓ 2012թ. ապրիլի 10-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի վիճակագիր Հ. Սիմոնյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Ժառանգաբար փոխանցվող արհեստները՝ զարգացման ընդհանուր հարթակ ստեղծագործական արտադրությունների հզորացում Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում» ծրագրի մեկնարկման շնորհանդեսին,
- ✓ 2011թ. ապրիլի 30-ին թվով 111 տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ մասնակցել են ք. Երևանում կայացած «Հայաստանի Ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, 2010» խորագրով սեմինարին,
- ✓ 2012թ. ապրիլի 17-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Նալբանդյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Թվինինգ, Թայեքս» գործիքներ խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2012թ. ապրիլի 20-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Եղիազարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Թվինինգ, Թայեքս» գործիքներ խորագրով աշխատանքային հանդիպմանը: